ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.03.2012թ.
166-ի 9

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւվս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ կայք է ստեղծվել կամ վերամշակվել 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում Երեւանի քաղաքապետարանի համար:
2. 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի (կայքերի) մշակման (վերամշակման) եւ գործարկման համար ըստ տարիների:
3. Խնդրում ենք տրամադրել ֆինանսավորման աղբյուրները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան